

–Տեր Աստուած զձեզ փորձութիւններէ ազատ պահէ. անօթի եմ, կտոր մը պայմանաժամ:

–Մանրուկ չկայ:

Տէրութիւններն չեն տար Թուրքիոյ այդ պայմանաժամն. իրաւունք ունին, վասն զի Բ. Դուռն ալ չուզէր տալ Տուլչինիօն Գարատաղին:

**

Կայսերական պալատին մէջ ամեն օր ժողովներ կը գումարուին խորհելու համար այն հնարքներուն վրայ, որովք կարելի լինի ոչ Տուլչինիօն Գարատաղի տալ, ո՛չ Եանեան Յունաստանի, ոչ ալ բարենորոգում Հայաստանի:

Զարմանալու չէ. թուրք կառավարութիւնն միշտ առնելու վարժուած ըլլալով՝ միշտ կը դժկամակի երբ իրմէ բան մը խնդրուի:

16 Օգոստոս

Կառավարութիւնը հրամայեց, որ մայրաքաղաքիս արու բնակիչներուն մարդահամարը պատրաստուի:

Մեծ դժուարութիւն... մարդեր կան որ կերպարանքով արու են թէպէտեւ, սակայն էզէն բնաւ տարբերութիւն չունին. ասոնք արուներու հետ պիտի հաշուին:

Դարձեալ մարդեր կան, որ հազիւ 1/3 մարդ կ'արժեն. եթէ ասոնց իւրաքանչիւրն մէկ մարդ պիտի համրուի՝ սխալ վիճակագրութիւն մը կ'ունենանք: Ուղիղ վիճակագրութիւն մը շինելու համար կ'առաջարկեմ.

1/4 մարդ հաշուել բոլոր թուրք խմբագիրները.

1 մարդ հաշուել հարիւր թուրք պաշտօնեայն.

1 մարդ հաշուել հարիւր քսանհինգ թուրք սպայն.

1 մարդ հաշուել վաթսուն թուրք կուսակալ:

Այս հաշուով միայն կարելի է ուղիղ վիճակագրութիւն մը յերեւան բերել:

17 Օգոստոս

Պ. Թրօթըր, որ Հայաստանէն մայրաքաղաքս վերադարձած է, յայտնած է թէ Հայաստանի մէջ մարդահամար ընելն անկարելի ըլլալով՝ ինքը տունէրը համրելով գլուխ հանած է այդ դժուարին գործը: Պ. Թրօթըր